մեծամեծօքն անկան յոտս նորա՝ Մեղա՛յ ասելով չի-
ջուցանել զբարկութիւն նորա. և ասաց. Երբ եկայք
առ իս, և ես աղաչեմ զձեզ զի մի՛ ձգեսջիք զիս ի
բռնաւորսն, այլ դուք տեսէք զդատաստան մեր։ Ահա՛
մեծ սուչն այս է նորա, որ աղցիցն է վախճաներ Փի-
լիպպոս կաթողիկոսն և Յակոբն ի տեղն նստեալ, ահա՛
Սուրբ Խաչն է և չի յիշեր ի պատարագն. և նոքա ա-
սեն. Լիցի այդ։ Եւ եկեալ առ նայ ասացին, եւ նա
գրեաց թուղթ յեկեղեցիսն. Թո՛ղ յիշեսցի Յակոբ կա-
թողիկոսն ի պատարագն նաւակատեաց Սուրբ Խաչի
յաւուր Շաբաթու։ Եւ ոչ եղև զիւրուն սրտի երկո-
ցունց, այլ խոկային զտիւ և զգիշեր։

Եչի (20 Սեպտ.) եկեալ եկն Եղիազար վարդա-
պետն ի Գալաթիա և անդ ասաց զիր գրել առ կաթո-
ղիկոսն, կեցցէ՛ արքայ ասելով։ Զայս արարեալ եթէ
ճնասցէ ասա, մինչև դարձցի թուղթն ի կաթողիկո-
սէն՝ և Տարէ՛ք թուղթն առ նայ զի կնքեսցէ և ու-
ղարկեսցուք առ կաթողիկոսն։ Եւ նոքա ևս ի ծածուկ
թէ որքան ունէին մարդ՝ կնքով գրեցին զամենայն
եղեալսն առ կաթողիկոսն թէ Բանադրէ՛ զեղիազարի
Բ Գ մարդն, զի թեւքն թափի. քանզի[1]) ամենայն
քաղաքս ի մեր կողմս է, և մինչև ցայժմ ի գոհ էին
վասն մեր, և ընդ նմա Բ Գ մարդ է և այլ ոչ ոք։

Ընդ աւուրս յայսոսիկ ժողովեաց Մուղնեցին ըզ-
նշանաւորս եկեղեցին Սուրբ Նիկողոսի, և դեռ ոչ էր
մտեալ թուղթ Յակոբ կաթողիկոսին ի քաղաքս և նոր
էր և բերողն չէր յերևան, և կարդալ ետուն. և գրեալ
թէ Վախճանեցաւ Հոգևորտէրն և մեք նստաք, և որ-
պէս Հոգևորտէրն եդեալ է ձեզ առաջնորդ զՅովանէս
վարդապետն, ո՞վ է որ կու հակառակի դմա. ո՛վ որ
չի կամենար զդայ՝ ի սուրն Աստուծոյ կու մատնեմ։

1) բան.